

347
Th-53

1933

53
საქორწინო, საოჯახო და სამეურნეო კანონთა კოდექსი
ქ. სსრ სახალხო კომისართა საბჭოს და ეკონომიკური საბჭოს ხაშველობის გამოცემა


ՎԱԽ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԱՐԴԻՍՆՈՒԹՅԱՆ, ԸՆՏԱՆԻՔԻ ՅԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՍԳԻՐՔ

(Փոփոխություններով մինչև 1933 թ. հունիսի 30-ը)

ԼՐԱՑՈՒՄՆ՝ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԴԱՔԱՐՁՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ



Հրատարակության ՎԱԽ Ժողովրդական Կոմիտարմերի Խորհրդի յեկ Տնտեսական Խորհրդակցու-
թյան գարձերի կառավարչության:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

1933

34-1
Са 888

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР
1 MAR 2010

Л 0 0 0 2 0 1 0

ՎԱԽԱՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ, ՀՆԴԱՆԻՔԻ ՅԵՎ
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՅԵՎ ԿԻՐԱԲԿՈՒԹՅԱՆ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

[1930 թ. հունվարի 21-ին (մ. Յիշ, Ար. Փադ. № 6, հոդ. 56):]

Համագրացական Կենտրոնական Թործաղիք Կոմիտեն վորոշում են՝

1. Հաստատել ամուսնության, ընտանիքի և խնամակալության Արենսպիրաց և կիրարկության դնել Վրաստանի ՍԽՀ ամբողջ տերրիտորիայի վրա, ներածությամբ Արքապետայի ՍԽՀ, ինքնավար Աճարիստանի ՍԽՀ և Հարավ-Ռութիայի ինքնավար մարզի տերրիտորիաները՝ 1930 թ. մայիսի 1-ից:

2. Սույն Արենսպիր 1-ին մասի 23-րդ հոդվ. հաստատված ստացվածքային փոխհարաբերությունների մասին յերեք տարվա ժամկետը՝ նախկին այն ամուսնությունը լուծված և մշտչի մոմաւանության, ընտանիքի և խնամակալության Արենսպիր Կիրարկության դնելու հաշվել 1930 թ. մայիսի 1-ից:

3. [Զի բերվամբ]:

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ, ԸՆԴԱՆԻՔԻ ՅԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՍԳԻՐՔ

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ I

ԸՆԴԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Ամուսնությունը ձևակերպվում է քաղաքացիական կացության ակտիքի տոմարագրության մարմիններում՝ տոմարագրելու միջոցով՝ այս Արենսպիր Խաժնում սահմանված կարգով։ Ամուսնության տոմարագրությունը սահմանվում է ինչպես պետական և հասարակական շահերի տևակիալից, այնպես ել ամուսինների և զավակների անձնական և ստացվածքային իրավունքների պաշտպանությունը դյուրացներու համար։

2. Ամուսնության տոմարագրությունը քաղաքացիական կացության ակտիքի տոմարագրության մարմիններում ամուսնության ապացույց և հանդիսանում։ Կրոնական ծխակատարություններով տեղի ունեցած ամուսնության փաստը հաստատող փաստաթղթերը իրավական վորեն նշանակություն չունեն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆ. — Մինչև Վ. ՍԽՀ Հեղկումի 1921 թ. ապրիլի 28-ի № 28 «Քաղաքացիական ակտերի մասին» զեկրեսը կյանքի մեջ փառատորեն կիրարկելը՝ կրոնական ծխակատարություններով կատարված ամուսնությունները հավասարեցվում են տոմարագրված ամուսնություններին։

3. Փաստորեն ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող և սահմանված կարգով չտոմարագրված անձերն իրավունք ունեն ամեն ժամանակ ձևակերպելու իրենց հարաբերությունները տոմարագրության միջոցով, հիշատակելով իրենց փաստորեն միասին տպրելու ժամանակամիջոցը։

ԳԼՈՒԽ II

ԱՄՈՒՍՆԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Ամուսնանալու համար անհրաժեշտ ե՞ւ ա) փոխադարձ համաձայնություն, բ) ամուսնական հասակին հասնելը և գ) այս Որենսգրքի 140-րդ հոդվ. հրշատակված փաստաթղթերը ներկայացնելը:

5. Ամուսնական հասակը սահմանվում ե՞ւ կանանց համար 16 տարին, տղամարդկանց համար — 18 տարին:

6. Ամուսնանալու իրավունք չունեն՝ ա) այն անձինք, վորոնք գտնվում են տոմարագրված կամ չտոմարագրված ամուսնական հարաբերությունների մեջ, բ) այն անձինք, վորոնք սահմանված կարգով տկարամիտ կամ հոգեկան հիվանդ են ճանաչված կամ թե ժամանակավորապես գտնվում են այսպիսի դրություն մեջ, վոր չեն կարող հասկանալ իրենց կատարած գործողությունների նշանակությունը, գ) խնամակալները խնամակալվածների և վորդեպողները վորդեպրվածների հետ մինչև այն իրավաբանական փոխարարերությունների վերանալը, վոր հիմնված են խնամակալության և վորդեպրման հիմունքների վրա, դ) ուղիղ վերընթած կամ վայրընթած գծով ազգականության մեջ գտնվող անձերը (հայրը և աղջիկը, մայրը և վորդին, պապը և թոռը և այլն), հարազատ և խորթ քույրերն ու յեղայրները, ինչպես նրանք, վորոնք ծագում են ընդհանուր հորից և մորից, այնպես ել նրանք, վորոնք կամ ընդհանուր հայր ունեն, բայց տարբեր մայրեր կամ ընդհանուր մայր, բայց տարբեր հայրեր:

ԳԼՈՒԽ III

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆ

7. Ամուսնությունն անվավեր կարող է ճանաչվել միայն որենքով նախատեսված դեպքերում:

8. Անվավեր է ճանաչվում այն ամուսնությունը, վորը տեղի յի ունեցել մինչև յերկու ամուսինների կամ ամուսիններից մեկի ամուսնական հասակին հասնելը, բացի հետեւյալ դեպքերից՝ ա) յերբ ամուսնությունը սինվավեր ճանաչելու մասին դատական վորոշում կայացնելու ժամանակ ամուսինները հասել են ամուսնական հասակին, բ) յերբ ամուսնության հետեւանքով տեղի յի ունեցել ծննդաբերություն կամ կնոջ հղություն; գ) յերբ ամուսնական հարաբերությունների հետեւանքով առաջ ե յեկել ամուսիններից մեկի հիվանդություն կամ անաշխատունակություն;

9. Անվավեր են ճանաչվում այն ամուսնությունները, վորոնք կայացրված են սույն Որենսգրքի հայտապես նախատեսներով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Այն գեղքում, յերբ ամուսնությունը անվավեր է ճանաչվում սույն Որենսգրքի 6-րդ հոդվ. «ա» կետի խախտման հետեւանքով, նախկին ամուսնությունը մնում է իր ուժի մեջ:

10. Ամուսնությունը անվավեր ճանաչելու մասին գործը կարող է հարուցվել ամուսինների կողմից, այն անձնավորությունների կողմից, վորոնց շահերը խախտված են այդ ամուսնության հետեւանքով և պետական իշխանության ներկայացուցիչների կողմից:

11. Ամուսնությունները անվավեր ճանաչելու մասին գործերը քննվում են ժողովրդական դատարանում:

12. Ամուսնությունը անվավեր ճանաչելու մասին դատական վորոշումը որինական ուժ ստանուլուց հետո՝ ամուսնությունը անվավեր է հաշվում այդպիսին կնքելու ժամանակից:

13. Այն անձինք, վորոնց ամուսնությունը անվավեր է ճանաչված, կարող են նորից ամուսնանալ յեթե վերացված է ամուսնությունը անվավեր ճանաչելու մասին կայտցված վորոշման հիմունքը:

ԳԼՈՒԽ IV

ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14. Ամուսնության տոմարագրության ժամանակ ամուսինները կարող են անել հայտարարություն՝ գրվելու մարգու կամ կնոջ ազգանունով, կար ամուսինների միացյալ ազգանունով, կամ պահպանել իրենց մինչամուսնական ազգանունները:

15. ՎԱԽՀ քաղաքացիության և ոտարյերկրյա քաղաքացիության մեջ բանվող անձերի ամուսնությունը տոմարագրելիս՝ նրանցից յուրաքանչյուրը պահպանում է իր քաղաքացիությունը: Այդ անձանց քաղաքացիությունը կարող է փոփոխության յինթարկվել Միութենական որենքով սահմանված կարգով:

16. Ամուսիններից մեկի բնակավայրի փոփոխությունը մյուս ամուսնու համար նրան հետեւելու պարտականություն չի ստեղծում:

17. Մինչև ամուսնությունը ամուսիններին պատկանող գույքը նրանց բաժան գույքն է համարվում: Ամուսնության ընթացքում վաստակված գույքը համարվում է ամուսինների ընդհանուր գույքը հավասար բաժնով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Կնոջ աշխատանքը տնային տնտեսություն վարելու և յերեխաններին խնամելու գործում հավասարեցվում է աղամարդ ամուսնու ապրուստի միջոցներ հայթեայթելու աշխատանքին և ստեղծում է գույքի հանդեպ հավասար ստացվածքային իրավունք:

18. Այս Որենսգրքի 17-րդ հոդվածի ներգրածությունը տարածվում է նաև այն անձանց գույքի վրա, վորոնք փաստապես ամզանական հարաբերությունների մեջ են գտնվում:

19. Այս գեղգում, յերբ ամուսնությունը տոմարագրված չե, զատարանի համար ամուսնական կենակցության աղացույց են հանդիսանում միատեղ կենակցելու փաստը, այդ կենակցության հետ ընդհանուր տնտեսության գոյությունը, ամուսնական հարաբերությունների արտահայտությունը յերբորդ անձանց առջև անձնական գրագրության մեջ և այլ փաստաթղթերում և նույնպես—նայած հանդամանքներին—փոխադարձ նյութական ոժանդակությունը, զավակներին միատեղ դաստիարակելը, և այլն:

20. Անշափահամանների (հոգվ. 5-րդ) ամուսնության գեղգումներանց վրա սահմանված հոգարածությունը վերացվում է:

21. Ամուսինները կարդի են ունենալ իրար հետ որենքով թույլատրված ամեն տեսակի ստացվածքային և պայմանագրերից բղխող փոխարարերություններ: Ամուսինների միջն կայացած այն համաձայնությունները, վորոնք նվազեցնում են կոսջ կամ մարդու ստացվածքային իրավունքները, անվավեր են և պարագիր չեն ինչպես յերբարդ անձանց, այնպես ել ամուսինների համար, վորոնց իրավունք եվրապահվում այդ համաձայնությունները կատարելոց, ամեն ժամանակ հրաժարվելու:

22. Միջոցներից գուրկ անաշխատունակ ամուսինն իրավունք ունի պարուստի միջոց ստանալու մյուս ամուսնուց, յեթե վերջինը դատապահնի վրոշմանը ցանքակության ցույց տալու ընդունակ ե ճանաչվում: Հավասարապես ապրուստի միջոց ստանալու իրավունք ունի միջոցներից գուրկ աշխատունակ ամուսինը գործազրկության ժամանակ:

23. Ամուսնությունը լուծելուց հետո յերեք տարիվա ընթացքում միջոցներից գուրկ անաշխատունակ ամուսինը պահպանում է մյուս ամուսնուց պարուստի միջոց ստանալու իրավունքը, յեթե վերջինը ընդունակ ե ցույց տալու այդ ստանակությունը և յեթե անաշխատունակությունն առաջ ե յեկել մինչև ամուսնությունը, ամուսնության ընթացքում կամ թեպետ դրանից հետո, բայց ամուսնության մեջ գտնվելու կապակցությամբ: Ապրուստի միջոց ստանալու իրավունք ունի նաև միջոցներից գուրկ և գործազրուրկ ամուսինը՝ ամուսնությունը լուծելուց հետո մեկ տարիվա ընթացքում:

Ապրուստի միջոց ստանալու իրավունքը ամենայն գեղգում վերանում է ապրուստի միջոց ստացողի նոր ամուսնության հետևանքով, նաև ապրուստի միջոց վճարողի մահվան հետևանքով:

24. Ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեն՝ ինչպես ամուսնության, այնպես ել ամուսնությունը լուծելու գեղգում նաև այն անձերը, վորոնք փաստապես ամուսնական հարաբերությունների մեջ են, թեկուզ և այդ հարաբերությունները տոմարագրված չեն, յեթե նրանք, համապատասխանում են այս Որենսգրքի 19-րդ հոդվ, նախատեսված նշաններին:

25. Ամուսնությունը գաղարում է ամուսիններից վորմել մեկի մահվան գեղգում, այլ և յեթե դատարանը նրան մահացած է ճանաչում:

26. Ամուսինների կենդանության ժամանակ ամուսնությունը կարող է լուծվել ինչպես ամուսինների փոխադարձ համաձայնությամբ, այնպես ել նրանցից վորմել մեկի մի կողմից ցանկությամբ (ապահարզան):

27. Ամուսնության լուծումը ամուսինների կենդանության ժամանակ (ապահարզան) առմարտագրում է քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մարմիններում, ինչպես արձանագրությունը ամուսնության լուծման անվիճելի ապացույց և ներկայանում:

28. Այս գեղգում, յերբ բացակայում է ապահարզանի տոմարագրությունը՝ ամուսնալուծության փաստը կարող է հաստատվել նաև զատարանի կողմից:

29. Ամուսնալուծությունը տոմարագրելիս ամուսինները հայտնում են, թե ինչ ապահանումով և կամենում զրվել նրանցից յուրաքանչյուրը: Ամուսինների մեջ ճարցում համաձայնություն չի նելու գեղգում՝ նրանցից յուրաքանչյուրին վերապահվում և նրա մինչամուսնական ազգանունը: Այս գեղգում, յերբ ամուսնությունը դապարել է ամուսինների մեկի մահվան կամ նրան դատական կարգով մահացած ճանաչելու հետևանքներով, կենդանի մնացած ամուսնությամբ պահում է ամուսնության ժամանակ հաստատված ազգանունը:

30. Քաղաքացիական կացության տոմարագրության մարմինների կողմից ամուսնալուծությունը տոմարագրելիս անպայման հարց և գրգում այն մասին, թե ամուսիններից վարի մոտ և զանազան կատարակելու, և թե նրանցից վարի և ինչ չափով պետք է նորա զավակների ապրուստի ծախքեղը, այլ և անաշխատունակ ամուսնուն հասանելիք ապրուստի չափը: Յեթե ամուսինների մեջ այդ ճարցիրի մասին համաձայնություն կայացել է, այդպիսին մուծվում է տոմարագրության մատյանը, վորքագածքը արգում է ամուսիններից յուրաքանչյուրին: Այդ համաձայնությունը չի զրկում նախկին ամուսիններին և զավակներին հետագայում ընդհանուր դատապահաննչի կարգով՝ համաձայնությամբ նախատեսվածից ավելի կամ պակաս չափով ապրուստի միջոց պահանջելու իրավունքից:

31. Համաձայնության մեջ հիշատակված պարագանությունները չկատարելու գեղգում, շահագրգուստ անձերը կարող են դիմել նոտարական որպանին՝ պետական նոտարայտի մասին կանոնագրության 46-րդ հոդվ, համաձայն, կատարագանական մակագրություն ստանալու համար:

32. Համաձայնությունը չի նելու գեղգում զավակների ապրուստի միջոցի չափի հարցը անորինվում է ընդհանուր դատապահաննչի կարգով, ըստ վորում դատարանը հարցախնդիրն ընդունելու հետ միաժամանակ՝ հայտ գործի հանդամանքներին և յելներով զավակների շահերի պաշտպանության տեսակետից, վորոշում և կայացնում այն մասին, թե ժամանակավորապես:

մինչև վեճի վերջնական լուծումը, ծնողներից վերը և ինչ չափով պարտական ե հոգալ զավակները պահելու ծախսերը նաև, ում մոտ պետք է դաստիարակվեն զավակները:

Կարիքավոր և անաշխատունակ կամ գործադուրկ ամուսնու ապրուստի միջոցի չափի հարցը, համաձայնություն չինելու դեպքում, նույնպես վորոշում և դատարանի կողմից ընդհանուր դատապահանջի կարգով:

ԲԱԺԻՆ ՅԵՐԿՐՈՐԴ

ԶԱՎԱԿՆԵՐԻ ՈՒ ԾՆՈՂՆԵՐԻ ՅԵՎ ԱԶԳԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԳՏՆԵՎՈՂ ՈՒՐԻՇ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՐԱՐՄԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ V

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

33. Զավակների և ծնողների փոխազարձ հարաբերությունները հիմնը ըստ են արենակցության վրա: Այն զավակները, վորոնց ծնողները ամուսնացած չեն, վայելում են նույնպիսի իրավունքներ, ինչպես և ամուսնացած ծնողների զավակները:

34. Զավակների հայրը և մայրը արձանագրվում են ծննդամատյանի մեջ:

35. Ծնողների մասին արձանագրություն չինելու կամ արձանագրության անկանոնության կամ թերության գեղքում՝ շահագրգոված անձանց իրավունք և վերապահվում դատական կարգով ապացուցելու կամ ժխտելու հայրությունը և մայրությունը:

36. Անկախ այն հանգամանքից՝ գտնվում է նա արդյուք ամուսնության մեջ թե չի գտնվում, ամեն մեկ հիմքած կամ զավակը ծնած կին իրավունք ունի հայտարարություն ներկայացնել զավակի հոր մասին քաղաքացիական կացության ակտերի արձանագրության տեղական մարմնին ըստ իր բնակած վայրի, հիշատակիլով զավակի հոր անունը, հայրանունը, ազգանունը և աշխատանքի կամ ծառայության վայրը:

Զավակ ծնվելուց հետո այդ հայտարարությունը կարելի յէ անել միայն մեկ ամսվա ժամանակամիջոցում: Այդ ժամանակամիջոցն անցնելուց հետո հայրությունը կարելի յէ հաստատել միայն դատական կարգով:

Հղիացած կնոջ կողմից ներկայացրած հայտարարությանը պետք է կցվի բժշկական վկայական, վարը պետք է պարունակի իր մեջ ինչպես հղության փաստի, նույնպես և սաղմառության ժամանակի մոտավորապես վորոշման հաստատումը: Այդ հայտարարությունը կարող է հաստատվել սպասելիք յերեխայի հոր կողմից, ինչպիսի հաստատումը համահավասար է յերեխային հոր կողմից իրեն զավակ հանաչելուն:

37. Այն գեպքում, յերբ հղության կամ զավակ ծնվելու վերաբերյալ հայտարարությունը տրվում է միայն մոր կողմից, քաղաքացիական կացության ակտերի արձանագրության տեղական մարմինը յերեք որվա ժամանակամիջոցում ուղարկում է հայտարարության մեջ իրեն հայր հիշատակված անձնավորությանը ծանուցում այդ մասին, պարտավորելով վերջինին ծանուցումը հանձնելուց հետո մեկ ամսվա ընթացքում հայտնել՝ ճանաչնել և արդյոք նա իրեն զավակի հայր թե չե: Ծանուցումը հանձնելու մասին վերցվում է ստացագիր:

Յեթե հայտարարության մեջ հայր անվանված անձնավորությունը յերեխային իրեն զավակի չի ճանաչում, յերեխայի մայրը այդ հանգամանքը կարող է ապացուցել դատարանի միջոցով՝ ընդհանուր դատապահանջի կարգով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յեթե մոր կողմից ներկայացրած հայտարարության մեջ զավակի հայր և անվանված սաղմանվորման շրջանից հետո մահացած ամուսինը՝ քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մարմինը մտցնում է նրան արձանագրությունների գրքի մեջ իրեն զավակի հայր, համաձայն մոր կողմից արած հայտարարության:

38. Զավակի ծնողների մասին քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության գրքերում արձանագրություն չինելու կամ արձանագրության անկանոնության գեղքում, նաև զավակի ծննդյան թվականի անկանոնության գեղքում, շահագրգոված անձանց և շահագրգոված հիմնարկություններին իրավունք և վերապահվում դատական կարգով ապացուցելու կամ ժխտելու զավակի ծառայումն վորոշ ծնողներից կամ վորոշ հայրից կամ մայրից, նաև զավակի ծննդյան թվականը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.—Քաղաքացիական կացության ակտերի գրքերում զավակի ծնողների մասին արած արձանագրությունը դատական կարգով բոլորքարկելու գեղքում, նաև զավակի հայր կամ մայր վոչ թե տոմարագրած անձանց, այլ ուրիշ անձնավորություններ ճանաչելու մասին գործերը քննող դատարանը վորոշում է կայացնում, յենելով բացառապես զավակի շահերը պաշտպանելու տևակետից, և պարտավոր և մերժել իսկական հոր և մոր կողմից ներկայացրած հայրը, յեթե զավակի շահերը այդ են պահանջում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.—Այն գեպքում, յերբ դատարանը վորոշում է կայացնում զավակի ծագման վերաբերյալ կամ թե արձանագրության ճիշտ կամ անկանոն լինելու մասին՝ համապատասխան դրանցումը քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության գրքերում կատարվում է դատարանի կայացրած վորոշման հիման վրա:

39. Քաղաքացիական կայության տկտերի արձանագրության տեղական մարմինն տված հայտարարության մեջ իրեն հայր ձանաշող անձնափառությունը կամ որենքով սահմանված կարգով այդպիսին ձանաշված անձը պարտավոր և զավակի հղության, ծննդաբերության և կերակրման հետ կապված ծախսերին մասնակցել:

Վերոնիշյալ անձնափորությունը նույնպես պարտավոր և նյութական ժամանակություն ցույց տալու զավակի մորը՝ ինչպես նրա հղության ժամանակ, նույնպես և ծննդաբերությունից հետո մեկ տարվա ընթացքում:

40. Յեթե դատարանը հայրության հարցը քննելիս հաստատի, վոր զավակի մայրը սպանմափորման շրջանում՝ բացի նրա հայտաբարության մեջ հիշատակված անձից՝ սեռական հարաբերության մեջ և յեղել նաև այլ անձնց հետ, ապա դատարանը, յենելով բացառապես զավակի շահերից, վորոշում և կայացնում այդ անձերից վորեւ մեկին զավակի հայր ձանաշերում մասին և դուռը և նրա վրա այս Որենսգրքի 39-րդ հոդվածով նախատեսված պարտականությունները:

ԳԼՈՒԽ VI

ԱԶԳԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

41. Ծնողական իրավունքները կիրառվում են բացառապես նկատի ընկանառվ զավակների շահերը, և այդ իրավունքները անկանոն կարգով կիրառելու դեպքում դատարանին իրավունք և վերապահվում զրկելու ծնողներին իրենց իրավունքներից:

42. Յեթե ծնողները մեկ ընդհանուր ազգանուն են կրում, ապա այդ ազգանունն և սահմանվում նաև զավակների համար: Յեթե ծնողներն ընդհանուր պազանուն չեն կրում, ապա զավակների ազգանունը սահմանվում է ծնողների համաձայնությամբ՝ հոր կամ մոր ազգանունը կամ թե ծնողների միացյալ ազգանունը: Յեթե ծնողների միջև ազգանվան մասին համաձայնություն չինի, ապա զավակների ազգանունը վորոշվում է ինձնակալության և հոգաբարձության մարմինի կողմից: Հոր տնհայտ լինելու դեպքում զավակը կրում է մոր ազգանունը: Ամուսնալուծության վեպքում զավակները պահպանում են այն ազգանունը, վորն ստացել են ծնունդն արձանագրելու ժամանակ:

43. Ծնողների տարբեր քաղաքացիության դեպքում զավակների քաղաքիությունը վորոշվում է ԽՍՀՄ որենքով:

44. Զավակների վերաբերյալ բոլոր միջոցառումները ձեռնարկվում են յերկու ծնողների կողմից միատեղ:

Ծնողները պարտավոր են նոր տաճակ իրենց անշափահաս գալակների և մասնափորապես՝ նրանց գաստիաբակելու, համաձայն խորհրդային իշխանության նպատակներին, ֆիզիկապես զարգացնելու և հանրուեն ոգտակար գործունեության համար պատրաստելու մասին:

45. Ծնողների միջև տարածայնություն լինելու դեպքում, վիճելի հարցը լուծվում է ինսամակալության և հոգաբարձության մարմինների կողմից՝ ծնողների մասնակցությամբ:

46. Յեթե ծնողները միասին չեն տպրում; ապա նրանց համաձայնությունից և կախված, թե նրանցից վորի մոտ պետք են մասն անշափահաս զավակները, Ծնողների մեջ համաձայնություն չինելու դեպքում՝ այդ հարցն ընդհանուր դատապահանջի կարգով լուծում է ժողովրդական դատարանը:

47. Ծնողները պարտավոր են ապրուստի միջոց հայթհայթել ինչպես անշափահաս, այնպես ել անաշխատունակ կարիքավոր և գործազուրկ չափահասա զավակներին, վերջիններին այն դեպքում միայն, յեթե ծնողներն իրենց անտեսական դրությամբ ի վիճակի յեն ցույց տալ նրանց ոժանակություն:

48. Խորթ մոր և խորթ հոր վրա նույնպես դրվում և պարտականություն ոժանակելու անշափահաս և կարիքավոր զավակներին հետեւյալ դնութերում՝

ա) յեթե այդ զավակների ծնողներն մահացել են,
բ) յեթե ծնողները բավականաչափ միջոցներ չունեն հոգալու զավակների կարիքները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Սույն հոդվածով մատնանշված պարտականությունը անցնում է նույնպես այն բոլոր անձանց վրա, վորոնք Քաղաքացիական Որենսգրքի 418 և 421 հոդվածների հիման վրա ստացել են խորթ հորից կամ խորթ մորից գույք, յեթե վերջինները ոլահելիս են յեղել կամ ըստ որենքի պարտավոր են յեղել պահերու խորթ փորդուն կամ խորթ աղջկան: Այդ պարտականությունը անցնում է ստացված գույքի սահմաններում՝ գույք ստացողներին համապարտու համեմատ պատասխանատվությամբ ըստ ստացած գույքի չափի:

49. Խորթ վորդիք և խորթ աղջիկները պարտավոր են ապրուստի միջոց հայթհայթել կարիքավոր անաշխատունակ խորթ հորը կամ խորթ մորը այն դեպքում, յեթե իրենք գտնվելիս են յեղել նրանց ծախքում:

50. Անշափահաս զավակների թե անձնական և թե ստացվածքային շահերի պաշտպանությունն ընկնում է ծնողների վրա, վորոնք զավակների ներկայացուցիչներն են հանդիսանում գատարանում և այլ հաստատություններում:

51. Ծնողներն իրավունք ունեն գատապահանջի կարգով պահանջելու, վոր զավակներին իրենց վերապարձնեն այն բոլոր անձերը, վորոնք նրանց իրենց մոտ են պահում վոչ որենքի կամ զատարանի վորոշման վրա, զատա-

բանը ձեւկանորեն կաշկանդված չե ծնողների իրավունքով և յուրաքանչյուր անգամ գործը պետք է լուծի բացառապես նկատի ունենալով զավակների շահերը: Այն գեպօրում, յերբ դատարանը մերժում ծնողներին՝ նա պարտավոր և այդ մասին տեղեկացնել խնամակալության և հոգարածության մարմին խնամակալ նշանակելու համար:

52. Ծնողներին իրավունք ե վերապահվում զավակների համաձայնությամբ նրանց աշակերտության և վարձու աշխատանքի տալու պայմանագրեր կնքել այն գեպօրում և այն կարգով, վորոնք նախատեսված են աշխատանքի գործող որենսգրառությամբ:

53. Այն գեպօրում, յերբ ծնողները չեն կատարում կամ անորինաչափ են կատարում իրենց պարտականությունները զավակների նկատմամբ, այլ և այն գեպօրում, յերբ դաժան վերաբերմունք են ցույց տալիս գեպի զավակները, — դատարանը վորոշում ե կայացնում այդ ծնողներին զրկել իրենց ծնողական իրավունքներից, խել զավակներին ծնողներից և հանձնել նրանց խնամակլության և հոգարածության մարմիններին, սրենույն ժամանակ դատարանը կարող ե վորոշել գանձել յերկու ծնողից ել զավակի համար ապրուստի միջոց: Այդ գործերը լուծվում են կնամակալության և հոգարածության որգանի ներկայացուչի յեղրակացությունը լսելուց հետո,

54. Ծնողական իրավունքից զրկելու մասին գործերը կարող են հարուցվել համապատասխան պետական մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների կողմից, այլ և շահագրգուված անձանց հայտարարությունների հիման վրա:

Խնամակալության մարմիններին իրավունք ե վերապահվում մինչև դատարանի վճիռը՝ վորոշում կայացնել զավակներին առնելու ծնողներից կամ այլ անձերից, վարոնց խնամքի տակ նրանք գտնվում են, յեթե զավակներին այդ անձանց մոտ թողնելը վտանգավոր ե զավակների համար:

55. Ծնողական իրավունքներից դատարանի վորոշմամբ զրկված ծնողները չեն զրկվում խնամակալության և հոգարածության մարմինի խնամքին հանձնված զավակների հետ տեսակցելու իրավունքից: Սակայն խնամակալության և հոգարածության մարմինը կարող ե ծնողներին թույլ չտալ տեսակցել զավակների հետ, յեթե գտնի, վոր այդպիսի տեսակցությունը կարող ե վնասակար ազգեցություն ունենալ անչափահասի վրա:

56. Ծնողական իրավունքներից զրկվելը ծնողներին չի ազտում զավակների ապրուստի և դաստիարակելու ծախսերը հոգարուց:

57. Զավակները պարտավոր են ապրուստի միջոցներ հայթնայթել իրենց ծնողների համար՝ նրանց անաշխատունակության կամ անզործության գեպերում:

Ծնողների ապրուստի միջոցի չափը ամեն մեկ զավակի համար բնորոշվում ե ծնողների կարիքավորության և անաշխատունակության չափի և ամեն մեկ զավակի տնտեսական դրության համեմատ:

58. Յեթե ծնողները չկամենան ապրուստի միջոց հայթնայթել զավակներին, այլ և յեթե զավակները չկամենան նորալ ծնողների ապրուստը այս Արենսգրքի 47 և 57 հոդվածներով նախատեսված գեպերում, ապա ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեցող անձերը կարող են դատական կարգով պահանջել իրենց ապրուստը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Ծնողների կամ զավակների նյութական դրությունը փոխվելու դեպքում, դատարանի վճիռը կարող ե փախվել դատարանի կողմից՝ ընդհանուր դատավահանջի կարգով:

59. Միատեղ ապրուստի միջոցներ հայթնայթելու պարտավորված անձնավորությունները պատասխանատու յեն հավասար չափով՝ բացառությամբ այն գեպերի, յերբ դատարանը, նկատի առնելով պարտավորված անձերի նյութական տարրեր վիճակը, կամ նրանցից վորուն մեկի բացակայությունը, կամ այլ հարգելի պատճառներով՝ անհրաժեշտ կհամարի այդ պարտականության կատարմանը մասնակցելու այլ չափեր սահմանել:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Ծնողների և զավակների իրավունքները գյուղացիական ծխի գույքի վերաբերմամբ սահմանվում ե Հողային Որենսգրքի համապատասխան նորվածներով:

60. Կարիքավոր անչափահաս յեղբայրներն և քույրերն իրավունքունի ապրուստի միջոց ստանալու բավականաչափ միջոցների տեր իրենց յեղբայրներից և քույրերից այն գեպերում, յերբ հիշյալ յեղբայրներն ու քույրերը չեն կարող ապրուստի միջոցներ ստանալ իրենց ծնողներից՝ վերջինների միջոցներից զուրկ լինելու կամ չըավորության պատճառով:

61. Անաշխատունակ և կարիքավոր պապն ու տատն իրավունք ունեն ապրուստի միջոց ստանալու իրենց բավականաչափ միջոցների տեր թոռներից, յեթե միայն անկարող են այդ միջոցներն ստանալու իրենց ամուսիններից: Նմանապես ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեն իրենց բավականաչափ միջոցների տեր պապից և տատից նաև թոռները, յեթե այդ միջոցները չեն կարող ստանալ իրենց ծնողներից, յեղբայրներից և քույրերից:

62. Աշխատավորական, հողագործական տնտեսության (ծխի) անդամից զավակի համար ապրուստի միջոցներ բռնագանձելիս, յերբ նրա անձնական միջոցները բավական չեն զավակին ապահովելու համար, վերջինս իրավունք ունի ապրուստի միջոցը ստանալու ծխի ընդհանուր գույքի այն մասից, վորը հասնում է ծխի հիշյալ անդամին:

Այս պարագաներում բռնագանձումը —

ա) թույլատրվում է միմիայն ծխի այնպիսի անդամների նկատմամբ, զորոնք ընդհանուր անտեսություն են վարում, և

բ) կարող և դարձվել միմիայն զբաժական զումարների և տնտեսության արդյունքների վրա, սակայն չի կարող տեղի ունենալ հոգից, անտեսուններից, ինվենտարից և ծիփ ընդհանուր տնտեսության սարք ու կարգից հարկադիր կերպով բաժին հանելու միջոցով, յեթե այդ ձեռվ բաժին հանելը չի կատարվում այն կարգով և պայմաններում, վորոնք նախատեսված են Հողային Որենսգրքով՝ աշխատավարական հողագործական տնտեսությունների (ծիփի) բաժանության համար:

ԳԼՈՒԽ VII ՎԱՐԴԵԳՐՈՒՄ

63. Վորդեգրումը թույլատրվում է միմիայն անչափահանների նկատմամբ և բացառական յերեխանների շահերը նկատի ունենալով:

64. Վորդեգրելու իրավունք ունեն բոլոր այն անձինք, վորոնք հասել են քսան տարեկան հասակին, բացառությամբ՝

ա) վանականների ու կրոնական պաշտամունքների հոգեոր սպասավորների՝ բոլոր գավառնությունների,

բ) պաշտոնյանների և գործակալների՝ նախկին վոստիկանության, ժանշգարմական արանձին վարչության ու պահուղական բաժանմունքների, Ռուսաստանի նախկին թագավորական տան անդամների, այլ և վոստիկանության և ժանշգարմերիայի գործունեությունը դեկավարող անձերի,

շ) անգործունակների,

դ) գատական կարգով ծնողական և այլ իրավունքներից զրկվածների, յ) վորդեգրվողի պարտապահների ու պարտատերերի, այլ և այն անձերի, վորոնց շահերը ներհակ են վորդեգրվողի շահերին:

65. Վորդեգրումը կատարվում է խնամակալության և նոգարարձության մարմինների վորոշմամբ և յենթակա յետոմարագրության ընդհանուր կարգով քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մարմիններում, վորոնց այդ նոգարակի համար ուղարկվում է հիշված վորոշման պատճենը:

66. Վորդեգրման ժամանակ վորդեգրվողը կարող է ստանալ վորդեգրուղի ազգանունը, իսկ յերբ վորդեգրվում է տրական սեփի անձնավորություն, նաև վորդեգրողի հայրանունը: Յերբ վորդեգրումը կատարվում է ամուսինների կողմից՝ վորդեգրվողի ազգանունը վորոշվում է նրանց համաձայնությամբ:

67. Յերբ վորդեգրողը ունի ծնողներ կամ գտնվում է ինսամակալության կամ հոգարձության տակ, վորդեգրման համար պահանջվում է ծնողների, ինսամակալների և հոգարձուների համաձայնությունը:

Սանկատներում գտնվող և ծնողներ չունեցող յերեխանները վորդեգրելու համար պահանջվում է կուսակցության ժամանակական կոմիտարիատի կատար-

անչափահանների սոցիալական-իրավական պաշտպանության բաժնի համաձայնությունը:

68. Յեթե վորդեգրում է ամուսնացած վորեե մեկը, անհրաժեշտ է մյուս ամուսնու համաձայնությունը:

69. Տար տարին լրացած յերեխանների վորդեգրումն առանց նրանց համաձայնության չի թույլատրվում:

70. Վոչ վոք չի կարող վորդեգրվել յերկու կամ ավելի անձնավորությունների կողմից, բացառությամբ՝ ամուսինների կողմից վորդեգրվելու դեպքից:

71. Թույլատրվում է մի քանի անձանց վորդեգրելը:

72. Թույլատրվում է խնամարկյալի վորդեգրումը նրա խնամակալի կամ հոգարձուների կողմից, այդ դեպքում վորդեգրողը պետք է հրաժարվի իր խնամարկյալական պարտականություններից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն հաստատությունը, վորը սույն հոգիածով նախատեսված դեպքում վորոշում և կայացնում վորդեգրման մասսին, կարող է վորոշումը կայացնել միայն այն դեպքում, յերբ խնամակալը հանձննել է խնամարկյալի բոլոր գույքը այդ նպատակի համար նշանակված խնամակալին:

73. Վորդեգրմաներն ու նրանց սերունդը վորդեգրակների նկատմամբ և վորդեգրուղիներ՝ վորդեգրվածների և նրանց սերնդի նկատմամբ իրենց անձնական, ստացվածքային իրավունքների և պարտականությունների, ասպարեզում հավասարեցվում են ծագումով ազգականներին: Միաժամանակ՝ վորդեգրվածները և նրանց սերունդը կորցնում են բոլոր իրավունքները և աղատվում են բոլոր պարտականություններից՝ հանձինս իրենց ուրիշ ծագումով ազգականների:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Սույն հոգվածի ներգործությունը տարածվում է բոլոր անձանց վրա, վորոնք կամ վորդեգրված են և կամ ընդունված եր ընտանիքի մեջ հնչանական վորդեգրիներ և ընկալնվածներ (Ո. Ժող. 1926թ. Ա 5, հոդվ. 110):

74. Անչափահանի ընտանիքի մեջ ընդունելը փաստուենա առանց իրավաբանական ձևակերպման, կարող է զատարանի համար հիմք ծառայի այդ անչափահանին իրավասու ձանաչել պահանջելու ապրուստի միջոց այն անձնավորություններ, վորի ընտանիքը նա ընդունված է:

75. Ցուրաքանչյուր անձ կամ հաստատություն կարող է դատական կարգով հարց հարուցանել վորդեգրումը բնկանելու մասին, յեթե այդ պահանջում յերեխայի շահերը:

76. Վորդեգրումը բնելանալու դեպքում դատարանը վորոշում է կայացնում յերեխան վորդեգրվողից վերցնելու, վերականգնելու ծնողների իրավունքը

և յերեխային ծնողներին հանձնելու, յեթե կամ այդպիսիները, կամ թե խնամակալության ու հոգաբարձության մարմինների խնամքին հանձնելու մասին:

77. Ոտարյերկրյա քաղաքացիները, վորոնք բնակվում են ՎՍԽՀ տերքիտորիայի վրա և պատկանում են բանվոր գասակարգին, ինչպես նաև ուրիշի աշխատանքը չաճազործող գյուղացիության թվին՝ խորհրդային քաղաքացիների յերեխաներին վորդեղբերու դեպքում պետք և զեկավարվեն սույն գլխի մեջ նախատեսված կանոններով, ստանալով, բացի դրանից, ամեն մի դեպքում այն շրջանային գործադիր կոմիտեյի համաձայնությունը, վորի շրջանում ապրում և վորդեղբարվողը՝ Այն գեղքում, յերբ ոտարյերկրյա քաղաքացին, վորը ցանկանում է կատարել վորդեղբումն, այդ աշխատավոր կատեղորիաներին չի պատկանում, պահանջվում է համապատասխան կենտրոնական Գործադիր Կոմիտեյի թույլավությունը:

ԲԱԺԻՆ ՅԵՐՐՈՐԴ

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ VIII

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

78. Խնամակալությունը և հոգաբարձությունը սահմանվում են անփրանակ անձի, նրա որինական իրավունքների և շահերի պաշտպանության համար, այլ և որինքով նախատեսված դեպքերում նրա ստացվածքի պաշտպանության համար:

79. Խնամակալությունը նշանակվում է տասնեւորս տարին շրացրած անչափահասների և սահմանված կարգով տկարամիտ կամ հոգեկան հիվանդ ժանաչվածների նկատմամբ: Բացի զրանից խնամակալությունը նշանակվում է անհայտ-բացակայող կամ մահացած անձանց գույքի վրա որենքով սահմանված դեպքերում: Խնամակալները իրենց խնամակալների անունից և նրանց շահերը նկատի ունենալով՝ իրականացնում են նրանց իրավունքները և կատարում՝ նրանց պարտականությունները:

80. Հոգաբարձությունը նշանակվում է տասնեւորս տարեկանից մինչեւ տասնեւոթ տարեկան անչափահասների, այլ և չափահասների վերաբերմամբ, յեթե վերջինները չնորհիվ իրենց ֆիզիկական վիճակի՝ անկարող են ինքնուրույն կերպով պաշտպանելու իրենց իրավունքները:

81. Ծնողները և վորդեղբողները խնամակալ և կամ հոգաբարձու յին համարվում առանց հատուկ նշանակման:

82. Խնամակալության բարոր տեսակները վարում են համապատասխան մարմինները, վորոնք մատնանշված են խնամակալության և հոգաբարձության մասին կանոնադրության մեջ:

83. Խնամակալությունն և հոգաբարձությունն անմիջականորեն իրականացնելու նպատակով՝ խնամակալության և հոգաբարձության մարմինները խնամակալ կամ հոգաբարձու են նշանակում խնամակալյալին մոտիկ անձերից, իսկ այդպիսիները չինելու գեպքում՝ այդ նպատակով արհեստակցական կամ ուրիշ հասարակական կազմակերպությունների կողմից ընտրված անձերից, նաև այլ անձերից:

84. Խնամակալությունն ու հոգաբարձությունը նշանակվում են ըստ խնամակալության կամ հոգաբարձության յենթակա անձի բնակության վայրի, կամ այն վայրում, վորտեղ գտնվում է խնամակալության յենթակա գույքը (հոդվ. 100):

85. Խնամակալ կամ հոգաբարձու ընտրելու ժամանակ ուշադրության պետք և առնվիճ անձնական հատկությունները, համապատասխան պարագաները կատարելու ընդունակությունը, այն հարաբերությունները, վորոնք գոյություն ունեն տվյալ անձի և խնամակալության կամ հոգաբարձության յենթակա անձի մեջ, այլ և, յերբ այդ հարավոր են նաև խնամակայի ցանկությունը:

86. Խնամակալ և հոգաբարձու չեն կարող լինել.—

ա) ՎՍԽՀ սահմանադրությամբ՝ ակտիվ և պասիվ ընտրական իրավունքներից զրկվածները.

բ) դատական կարգով ծնողական իրավունքներից զբկվածները (հոդվ. 53).

գ) այն անձերը, վորոնց շահերը ներհակ են խնամակալության և հոգաբարձության յենթակա անձերի շահերին, ինչպես նաև այն անձերը, վորոնք նրանց հետ թշնամական հարաբերություն ունեն:

դ) անչափահասները.

յե) այն անձերը, վորոնք հանված են աշխատավորների հասարակական կազմակերպություններից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այս հոդվածի «ա» կետում հիշված սահմանափակումը չի տարածվում նշանակված կամ հոգաբարձու անձերի մոտիկ աղքականների (կետ «գ» հոդվ. 6-րդ) վրա, իսկ «դ» կետի—ծնողների վրա:

87. Խնամակալ կամ հոգաբարձու նշանակվելուց հրաժարվել չի թույլատրվում՝ բացառությամբ այս հոգվածում հիշատակված դեպքերից. Խնամակալ կամ հոգաբարձու նշանակվելուց իրավունք ունեն հրաժարվելու՝ ա) այն տղամարդիկի, վորոնց 55 տարին լրացել են, բ) նրանք, ովքեր հիվանդության, ֆիզիկական պակասության, նյութական վիճակի կամ զբաղմունքի տեսակետից և կամ վարած պաշտոնի պատճառով անկարող են՝ կամ այդպիսով անկարող այդ պարտականությունները:

գ) այն անձերը, վորոնք իրենք յերկու կամ ավելի պավակ են դաստիարակում, դ) մինչև ութ տարեկան զավակ ունեցող մայրերը և հղացյալները և յ) արդեն իսկ խնամակալ կամ հոգաբարձու կարգված անձերը:

88. Անշափահասի խնամակալը և հոգաբարձուն պարտավոր և հոգալ նրա առողջության ու ֆիզիկական զարգացման մասին, նրա դաստիարակության ու կրթության մասին՝ խորհրդային իշխանության նպատակներին համապատասխան ուղղությամբ և հանրային ողտակար գործունեությամբ զբաղվելու պատրաստ լինելու նպատակով։ Հոգեկան հիվանդի կամ ակարամիտ անձի խնամակալը պարտավոր և միջոցներ ձեռնարկել նրան բժշկելու և խնամարկյալին առողջական վիճակին համապատասխան պայմաններում պահելու համար։

89. Խնամակարական և հոգաբարձական պարտականությունները կատարվում են ձրիարար։ Յեթև խնամակալության և հոգաբարձության մարմինների անորինության ներքո յեկամարկեր գույքեր կան, սպա այդ մարմինը կարող և վորոշ վարձարություն նշանակել խնամակալին կամ հոգաբարձուն՝ այդ գույքից սուացվող զուտ յեկամաի տասը տոկոսից վոչ պակելի չափով։

90. Խնամակարական և հոգաբարձության մարմինի կողմից անհրաժեշտ և ողտակար համարված այն ծախքերը, վորոնք կատարվում են խնամարկյալի ապրուստը հոգալու համար, կատարվում են նրա ստացվածքի յեկամաւներից, իսկ սրանց անբավարար լինելու կամ կատարելապես բացակայելու դեպքում՝ խնամարկյալի բուն ստացվածքից, վորոն ստացվում և խնամակարակության և հոգաբարձության մարմին. թույլտվությամբ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Խնամարկյալը վորեւ գույք չունենալու գեպքում՝ խնամակալության և հոգաբարձության մարմինը միջնորդություն և հարուցանում սոցիալական ապահովության մարմինի տառչ ինսամակալին միջոցներ արամադրելու մասին՝ խնամարկյալի առլուստը հոգալու համար։

91. Խնամակալը իրավունք ունի իր խնամարկյալին յետ պահանջելու ամեն մի անձնավորությունից, վորը պահում և նրան իր մոտ առանց վորեւ որինական հիմքի։

92. ՎԱԽ այն քաղաքացիների նկատմամբ, վորոնք գտնվում են կամ գույքեր ունեն ԽՍՀ Միության սահմաններից գուրմ խրամակալություն և հոգաբարձություն հաստատելու կարգը վորոշվում ե առանձին (այս համեմատը):

[1930 թ. նոյեմբերի 9-ին (ՎԱԽ Որ. մալ. 1930 թ. № 23, հարթ. 319):]

ԳԼՈՒԽ IX

ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՅԵՎ ՀՈԴԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

93. Խնամակարական պարտականությունները կայանում են՝ խնամարկյալի անձնավորության մասին հոգալու, նրա գույքը կառավարելու և նրա բոլոր գործերով նրա տեղը ներկայանալու գործում։

94. Խնամակալը կարող և կատարել այն բոլոր գործարքները, վոր կարող եր կատարել ինքը խնամարկյալը, յեթե նա գործունակ լիներ, այլ և այն գործարքները, վոր կարող եր կատարել այն գույքի սեփականատերը, վորի վրա խնամակարակություն և նշանակված, բացի այլքը գույքը ուսացված ժամանակությունից հրաժարվելուց, յեթե գույքը յերկար ժամանակով վարձակալության տարուց (մեկ տարուց ավելի), զ) խնամարկյալին պատկանող ձեռնարկության գործունեությունը զագարեցնելուց, ը) ընկերության պայմաններ կնքելուց, թ) քաղաքացիական գործը հաշտությամբ վերջացնելուց։ Այս գործողությունները կատարելու համար անհրաժեշտ և խնամակալության և հոգաբարձության մարմինների համաձայնությունը։ Խնամարկյալին պատկանող գույքի նվիրումը, ինչպես նաև նրա անունից յերաշխավորության պայմանագիր կնքելը բնավ չի թույլատրվում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Շուտ փչացող կամ իր բնույթով վաճառման յենթակա գույքը՝ կարող և վաճառվել առանց խնամակարակության և հոգաբարձության մարմինների թույլտվության։

95. Թույլատրելով գույքի ստարաւումը կամ գրավ գնելը, խնամակարակության և հոգաբարձության մարմինը պետք և ցուցմունքներ տա խնամակալին այն մասին, թե ստացված գումարները ինչ կարիքների վրա պետք է ծախսել։

96. Խնամակալը չի կարող վորեւ գործարք կատարել իր իսկ խնամարկյալի հետ, վոչ ել նրա ներկայացնեցիչը հանդիսանալ խնամարկյալի և իր ամուսնու կամ սույն Որենսգրքի 6-րդ հոդվ. հիշատակված մերձավոր ազգականների միջև գործարքներ կնքելիս կամ դատական վեճերի քննության ժամանակ և վոչ ել ձեռք բերել խնամարկյալի անունից պարտամուրհակների, խնամարկյալի՝ իրեն՝ խնամակալին կամ նրա ամուսնուն և ազգականներին (հոդվ. 6 բգ) տալիք պարտքերը, յեթե այդպիսիները տրված են մինչև տվյալ անձի խնամակալ նշանակելը, հատուցվում են խնամակարակության և հոգաբարձության մարմին թույլտվությամբ։

97. Անշափահաս խնամարկյալին դաստիարակության և կրթության տալու, կամ հոգեկան հիվանդին այլ անձանց խնամարկյան համար

ինամակալը պետք և ստանա ինամակալության և հոգաբարձության մարմիշ թույլովությունը:

98. Այս անձերը, փորոնց վերաբերմամբ, համաձան սույն Որենսգրքի 80-րդ հոդվածի, հոգաբարձություն և նշանակվում, գործարքներ են կատարում անպայման իրենց հոգաբարձուների համաձայնությամբ: Այս Որենսգրքի 94-րդ հոդվածում հիշատակված սահմանափակումները տարածվում են նաև հոգաբարձուների վրա: Հոգաբարձության ներքո գտնվողի անձնական աշխատանքով ձեռք բերված առաջարկների և գումարների վերաբերյալ գործարքներ կատարելու համար ինամակալության և հոգաբարձության մարմինների համաձայնությունը չի պահանջվում:

99. Խնամակալները և հոգաբարձուները հանդիս են գալիս ինամաբայլների և հոգաբարձության ներքո գտնվողների շահերը պաշտպանելու համար բոլոր հաստատություններում, փորոնց թվում նաև դատական հաստատություններում, ինչպես նաև ստացվածքային պայմանագրեր կնքելիս:

100. Յեթե ինամակալը կամ հոգաբարձուն անփույթ գտնվեն զեպի իրենց պարտականությունները կամ ի շարք գործ գնեն այդպիսիները կարող են հեռացվել իրենց պարտականությունները կատարելուց ինամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող անձի, կամ պետական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների կամ առանձին քաղաքացիների միջնորդությամբ, այլ և ինամակալության և հոգաբարձության մարմին նախաձեռնությամբ: Այս դեպքում, յերբ ինամակալի կամ հոգաբարձուի գործողությունների մեջ նկատվեն քրեական-պատժելի արարքների նշաններ՝ նրանց դեմ հարուցվում ե քրեական հետապելում:

101. Խնամակալների և հոգաբարձուների գործողությունների դեմ կաւրելի յե գանգատ առաջ ինամակալության և հոգաբարձության համապատասխան մարմիններին թե այն անձանց կողմից, վորոնք գտնվում են ինամակալության կամ հոգաբարձության ներքո, և թե պետական կամ հասարակական հաստատությունների և յերրորդ անձանց կողմից:

102. Խնամակալության և հոգաբարձության տեղական մարմինների գործուների և կարգադրությունների դեմ գանգատաները տրվում են այն կարգով, վորը ցույց է տված ինամակալության և հոգաբարձության մասին և անոնազգության մեջ:

ԳԼՈՒԽ X

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՎԵՐՍԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

103. Խնամակալության կամ հոգաբարձության գործերը քննելիս ինամակալության և հոգաբարձության մարմինը հրավիրում է դիմում ավողնե-

րին, գանգատավորներին, ինամակալներին և հոգաբարձուներին, գործով շահագրգոված անձերին, վկաներին, փորձագետներին, այլ և անհրաժեշտության գեղցում ինամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող կամ ինամակալության ու հոգաբարձության յենթակա անձերին, Դիմոդների, գանգատավորների և այլ անձերի չներկայանալը գործի քննության արգելը հանդիսանալ չի կարող, յեթե նրանց հրավեր ուղարկող մարմինը նրանց ներկայությունը պարտադիր չի համարում:

104. Խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու կամ վերացնելու, խնամակալներ կամ հոգաբարձուներ նշանակելու, նրանց արձակելու, գույքն ուսարելու կամ գրավ գնելու, իրավունքներից հրաժարվելու, բողոքները, հաշվետվությունները և յերեխայի դաստիրակության հետ կապված այլ և այլ խնդիրները քննելու մասին խնամակալության և հոգաբարձության մարմինները վորոշում են կայացնում, վորը հայտարարվում և շահագրգոված անձերին:

105. Յեթե այն անձը, վորի վերաբերմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն և նշանակված, գույքը ունի խնամակալության և հոգաբարձության վորեկ այլ մարմնի գործունեության շրջանում, ապա վերջինը, հարկավորության գեղցում, կարող է նշանակել առանձին խնամակալ այդ գույքը կառավարելու համար:

106. Անչափահասների վերաբերմամբ խնամակալություն և հոգաբարձություն սահմանելու անհրաժեշտության (այս Որենսգրքի 79 և 80-րդ հոդվ.) մասին՝ պարտավոր են յերեք որվա ընթացքում տեղեկացնել ա) տնային վարչությունները, տնատերերը և վարձակալները, յեթե այդ տներում կան խնամակալության յենթակա անչափահասներ, բ) քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության մարմինները, յեթե մահվան վաստակ մոմարագրելու պահին նրանց հայտնի դառնա անփնտ մնացած անչափահաս վորբերի, այլ և ընկեցիկների և վորբերի մասին, գ) դատական կատարածուները, յերբ գույքը ցուցակագրելու ժամանակ նրանք խնամակալության կամ հոգաբարձության յենթակա անչափահասներ հայտնաբերեն կամ հայտնաբերեն գույքի պահպանության անհրաժեշտություն (հոդվ. 79-րդ), դ) դատական մարմինները և միլիցիան այն գեղցում, յերբ ազատազրկման են դատակարատում, կամ կալանքի տակ են վերցնում իրենց խնամակալ անշափահասներ ունեցող անձանց, յերբ այդ անչափահասները զրահետեւնքով մնում են առանց պատշաճ հսկողության, յե) խնամակալության կամ հոգաբարձության յենթակա անձանց հետ ազգականությամբ կամ միաւղղ տնտեսությամբ կապված քաղաքացիները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Խնամակալության և հոգաբարձության մարմինը անչափահասի վերաբերմամբ խնամակալություն և նշանակում նաև սեփական նախաձեռնությամբ, յեթե տեղեկանում է այլ անելու անհրաժեշտության մասին:

107. Խնամարկյալների գույքի վաճառքը կատարվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի վորոշմամբ հրապարակային աճուրդով, կամ անհրաժեշտության դեպքում՝ փորձագետների կողմից վորոշված ազատ գոնվ։ Աճուրդը յենթակա յեն խնամակալության և հոգաբարձության մարմնի հետագա հաստատման։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գյուղական վայրերում խնամակալության և հոգաբարձության գործերով գյուղինուրդներին իրավունք եւ վերապահվում, խնամակալների կամ հոգաբարձուների առաջարկությամբ՝ աճուրդ նշանակել վաճառելու համար խնամարկյալների գույքը, բայց վոչ ավելի քան 15 սուրլու արժողությամբ; Դրա հետ միասին շրջանային գործադիր կոմիտեյի վրա եւ դրվում խնամակալության և հոգաբարձության գործերի ընդհանուր դեկավարությունը և անհրաժեշտության դեպքում՝ աճուրդ նշանակելու վաճառելու համար խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող և 15 սուրլուց ավել արժողություն ունեցող գույքը։

108. Խնամարկյալն պատկանող դրամական գումարները, արժեթղթերը և այլ արժեքները, բացառությամբ այն գումարների, վորոնք անհրաժեշտ են նրանց ապրուստը հոգալու և նրանց գույքը կառավարելու համար, պահպատ են պետական հաստատություններում (աշխատավորական խնայողական դրամարկղներում, պետական բանկի բաժանմունքներում և այլն) և չեն կարող գտնվել խնամակալի ձեռքին։

